ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարումն ապահովող 2008-2012թթ միջոցառումների

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ					ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
		2008	2009	2010	2011	2012	
1	2	3	4	5	6	7	8
Բաժին 4.4.3 **Կրթություն և գիտություն**							
13. Կառավարությունը, գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը համարելով Հայաստանի կայուն զարգացման գրավական, մեծապես խթանելու է գիտության ոլորտի բարեփոխումները՝ զարգացնելով գիտության հարցերով զբաղվող առանձին լիազոր մարմնի գործունեությունը:	13.1 Նպատակ ունենալով արագացնել համակարգի ենթակառուցվածքների արդիականացումը՝ կբարձրացվի ոլորտի կառավարման և գիտական աշխատանքների արդյունավետությունը:	Ավարտին հասցնել նորաստեղծ գիտության պետական կոմիտեի կադրային կազմավորումը: Իրականացնել գիտության պետական կոմիտեին հատկացված տարածքների նորոգումը և կահավորումը: Գիտության ոլորտի բարեփոխումների ծրագրի և ժամանակացույցի ֆինանսավորման բաղկացուցիչների հստակեցում:	Գիտության ոլորտի բարեփոխումների իրականացում Գիտության պետական կոմիտեի բնականոն գործունեության և զարգացման ծրագրի մշակում: Գիտության ոլորտի բարեփոխումների ծրագրին համապատասխան բյուջետային ֆինանսավորման ապահովում՝ աշխատավարձի մասնաբաժինը 75%:	ԳՊԿ ծրագրային գործունեության կազմակերպում: Ծավալած գործունեության մոնիթորինգ: Գիտության ոլորտի բարեփոխումների շարունակականության ապահովում: Զարգացման ծրագրի մշակում և դրա համապատասխան բյուջետային ֆինանսավորման ապահովում՝ աշխատավարձի մասնաբաժինը 65%:	ԳՊԿ ծավալած գործունեության ծրագրերի կատարման արդյունքների գնահատում և դրա հիման վրա փոփոխությունների ու առաջարկությունների մշակում, ներկայացում: Գիտության ոլորտի բարեփոխումների իրականացման մոնիթորինգ: Զարգացման ծրագրի մշակում և դրա համապատասխան բյուջետային ֆինանսավորման ապահովում՝ աշխատավարձի մասնաբաժինը 55%:	ԳՊԿ բնականոն գործունեության արդյունքների ամփոփում: Գիտության ոլորտի բարեփոխումների իրականացման արդյունքների ամփոփում:	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
	13.2 Ելնելով Հայաստանի գիտության զարգացման առաջնահերթ խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ կմշակվի Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը	«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտի մշակման նպատակով հանձնաժողովի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում և ամփոփում	«Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը» իրավական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	«Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը» համապատասխան՝ մշակել ռազմավարական 1 ծրագիր	«Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը» համապատասխան մշակել ռազմավարական 1 ծրագիր	Իրականացվող ծրագրի մոնիթորինգ և արդյունքների ամփոփում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
	13.3 Գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման նպատակով, միջազգային արդի չափանիշներին համահունչ, կվերահաստատվեն Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները՝ գիտական հասարակայնության անմիջական մասնակցությամբ	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների սկզբունքների և չափանիշների մշակում և սահմանված կարգով ՀՀ Կառավարություն ներկայացում:	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների մշակում և սահմանված կարգով ՀՀ Կառավարություն ներկայացում:	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող գիտական թեմաների իրականացում՝ թեմատիկ ֆինանսավորմամբ 100 գիտական թեմա	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող և գերակայություններից բխող 100 գիտական թեմաների իրականացմանը աջակցություն	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող և գերակայություններից բխող 100 գիտական թեմաների իրականացմանը աջակցություն	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ՀՀ
	13.4 Կառավարությունն առանձնահատուկ ուշադրություն կդարձնի հասարակական գիտությունների զարգացմանը՝ որպես հասարակական զարգացումների գիտական պլանավորման և իրականացման անհետաձգելի հրամայական:	հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրի մշակում	հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրի հաստատում	հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրի կատարման ապահովում	հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրի մոնիթորինգ	հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրի իրականացման արդյունքների ամփոփում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
	13.5 Բարեփոխումների արդյունավետությունն ապահովելու համար հստակեցվելու են գիտու-	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հան-	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հան-	ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունների գիտական և	ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունների գիտական և	ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գիտական կազմակերպությունների գիտական և գի-	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ՀՀ ԳԱԱ

	թյան զարգացման գործում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տեղն ու դերը	բապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և գիտության ոլորտի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակման նպատակով աշխատանքային խմբի ձևավորում և աշխատանքների կազմակերպում, նյութերի հավաքագրում, ուսումնասիրում և ամփոփում	բապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը: Գիտության ոլորտի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը կանոնակարգող այլ նորմատիվ ակտերի մշակում և սահմանված կարգով դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը	գիտատեխնիկական գործունեության զարգացման 3 ծրագրի կատարման ապահովում, ևս 2-ի մշակում	գիտատեխնիկական գործունեության զարգացման ծրագրերի մոնիթորինգ:	տատեխնիկական գործունեության զարգացման ծրագրերի արդյունքների գնահատում և ամփոփում:	/համաձայնությամբ /
	13.6 Գիտահետազոտական ինստիտուտների մրցունակության ապահովման, համալսարանական գիտության հետ այդ ինստիտուտների համադրման մեխանիզմների հստակեցում	Գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման նպատակով առկա իրավիճակի ուսումնասիրում, վերլուծություն՝ 100 կազմակերպություն	Գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման ծրագրերի մշակում և հաստատում: Հետազոտական համալսարանների չափանիշների մշակում	Գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման 5 ծրագրերի և հետազոտական համալսարանների չափանիշների հաստատում	Գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման 5 ծրագրերի մոնիթորինգ, 1 հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում	Գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման ծրագրերի արդյունքների գնահատում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
14. Կառավարությունը հետամուտ է լինելու բարձրագույն ուսումնական հաստատությունները գիտական լուրջ կենտրոններ դարձնելուն՝ խթանելով հետազոտական աշխատանքների ուժեղացումը:	14.1 Գիտության զարգացման առումով կարևորվում է գիտնականների համար գիտությամբ զբաղվելու գրավչության ապահովումը և գիտական գործունեության արդյունքներն իրացնելու հնարավորությունը տեղական և համաշխարհային շուկաներում:	«Գիտության հիմնադրամի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացում	«Գիտության հիմնադրամի» կանոնադրական խնդիրներին համապատասխան հինգ ծրագրերի իրականացում	Համապատասխան զարգացման ծրագրերի մշակում և հաստատման ներկայացում	Իրականացվող ծրագրերի կատարման ապահովում	«Գիտության հիմնադրամի» կանոնադրական ծրագրերի իրականացման արդյունքների գնահատում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
	14.2 Կներդրվեն գիտական ծրագրերի և կատարված աշխատանքների արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդներ՝ ինչպես գիտական աստիճանների շնորհման, այնպես էլ բյուջետային հատկացումների ծրագրավորման համար:	Գիտական ծրագրերի և արդյունքների գնահատման, գիտական աստիճանաշնորհման նոր համակարգի, ինչպես նաև անկախ փորձագիտական համակարգի ձևավորման, գիտական նախագծերի ֆինանսավորման ձևերի և կարգերի բարեփոխումների ուղղությամբ ներկա իրավիճակի ուսումնասիրում և նորմատիվ ակտերի նախագծերի մշակում և սահմանված կարգով ՀՀ Կառավարություն ներկայացում և ՄԺԾԾ –ում համապատասխան փոփոխությունների իրականացում	«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգի հաստատում»: Հաստատված նոր կարգերին և չափանիշներին համապատասխան՝ ծրագրերի մշակում, անկախ փորձագիտական և գիտական աստիճանաշնորհման նոր համակարգի ներդրում, բյուջետային հատկացումների հստակեցում՝ գիտական ծրագրերի և թեմաների մրցույթների կազմակերպում	Համապատասխան զարգացման ծրագրերի մշակում	Համապատասխան զարգացման ծրագրերի հաստատման ներկայացում	Ծրագրերի կատարման մոնիթորինգ: Արդյունքների գնահատում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ
15. Կմշակվեն և կիրագործվեն միջազգային կենտրոնների հետ համագործակցությանը և ինտեգրացմանը, հայագիտության արդի և հեռանկարային հիմնահարցերի լուծմանն ուղղված գի-	15.1. Գիտական կենտրոնների ձևավորում: Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում	«Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ	Ընդհանուր թվով 2 գիտական կենտրոնների ձևավորման և զարգացման երկամյա ծրագրերի մշակում:	Ընդհանուր թվով 4 գիտական կենտրոնների ձևավորման և զարգացման երկամյա ծրագրերի կատարման ապահովում /այդ թվում՝ 2 նոր երկամյա ծրագիր/	4 երկամյա ծրագրերի կատարման մոնիթորինգ, ևս 2 նոր երկամյա ծրագրի հաստատում	Արդյունքների գնահատում	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ

տական ծրագրեր, կտարվեն աշխատանքներ գիտական դպրոցների ձևավորման ուղղությամբ:		կառավարություն ներ-կայացնելը					

Ձև 2

ՑԱՆԿ

Գիտության ոլորտի գերակա խնդիրների

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների լուծմանն ուղղվող քայլերը
1	2	3
ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե	Գիտության ոլորտի բարեփոխումների իրականացման հիմքերի ապահովում	-Գիտության ոլորտում գիտական և նյութատեխնիկական բազայի գույքագրում, գիտության ոլորտի առկա վիճակի արձանագրում ու վերլուծություն - Գիտական կազմակերպությունների անձնագրավորում, տվյալների վերլուծություն, ամփոփում
		- «Հայաստանի Հանրապետության երկմակարդակ գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգ»-ի մշակում - Հայաստանի Հանրապետությունում երկմակարդակ աստիճանաշնորհման համակարգի զարգացման միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի ՀՀ կառավարություն ներկայացնելը,
		-«Գիտության զարգացման պետական ռազմավարության մշակում և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարություն